

ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

«Մատաղօրհնութիւն» հայերէն բարդ բառ մըն է, որ միացում մըն է երեք բառերու եւ կը նշանակէ՝ **մատուցում աղին օրհնութիւն**: Ան Հայ Եկեղեցոյ հոգեւոր-բարեպաշտական գեղեցիկ սովորութիւններէն մէկն է: Մատաղօրհնութեան կամ այս պարագային աւելի ճիշդ է ըսել զոհաբերութեան արմատները կ'երթան դեռեւս նախաքրիստոնէական ժամանակներ: Անցեալին ան յատուկ եղած է գրեթէ բոլոր ժողովուրդներուն:



Հին Կտակարանը նոյնպէս բազմաթիւ օրհնակներ ունի զոհաբերութեան: Բաւական է յիշել միայն Աբելի եւ Կայէնի զոհամատուցման դրուագը Աստուածաշունչի Ծննդոց գիրքէն: **Զմտոնանք, որ մեր Տէրը Յիսուս Քրիստոս որպէս Գառն Աստուծոյ ինքնակամ զոհաբերութեան կ'երթայ ի խնդիր մեղաւոր մարդկութեան փրկութեան: Քրիստոնէական Եկեղեցոյ Սբ. Պատարագը այլ բան չէ, եթէ ոչ Քրիստոսի զոհաբերութեան Խորհուրդը:**

Քրիստոնէական կրօնքին էութիւնը սերն է առ Աստուած եւ առ մերձաւորը: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս հետեւեալ պատգամը կու տայ մեզի. *«Գթասիրտ եղէք, ինչպէս որ գթասիրտ է ձեր երկնաւոր Հայրը»* (Լուկ. Զ 36):

Աղբատներու եւ կարոտեալներու խնամատարութեան գործն առաջին անգամ համայնքային կեանքի մաս դարձաւ Քրիստոնէական Եկեղեցիին մէջ, եւ Եկեղեցին գործնական այս սիրոյ առաքելութիւնը միշտ նկատեց իր ծառայական գործունէութեան հիմնական ուղղութիւններէն մէկը՝ իր ծագման առաջին օրերէն մինչ այսօր ջանասիրաբար փորձելով իրագործել Տիրոջ պատգամը եւ սքանչելի օրինակ մը փոխանցելով հետագայ սերունդներուն. *«Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, ազգականներդ եւ հարուստ դրացիներդ, որպէսզի չըլլայ որ անոնք ալ քու հրաւերիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեռով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ճաշկերոյթ կու տաս, կանչէ աղբատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք փոխարէնը քեզի հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»* (Լուկ. ԺԳ 12-14):

Աղբատներն ու կարիքաւորները, որբերն ու այրիները կը վայելէին եւ այսօր ալ պէտք է վայելեն համայնքի հովանաւորութիւնը: Սուրբ Սահակ Պարթեւ Հայրապետ (Ե դար) կը վկայէ, որ Հայոց դարձէն ետք Սբ. Գրիգոր Լուսաւորիչ կը պատուիրէ, որ փոխան կուռքերուն զոհեր մատուցուին, զոհագործութեան համար նախատեսուած միսը որպէս ողորմութիւն բաժնուի աղբատներուն:

Առ այսօր շատեր կը փորձեն ամբաստանել Հայ Եկեղեցին եւ մեր Մատաղի աւանդութիւնը նկատել որպէս հեթանոսութեան, հրեականութեան կամ բարբարոսութեան մնացուկ: Սակայն Հայ Եկեղեցոյ Մատաղը իր աղերսներն ունենալով հանդերձ նախաքրիստոնէական զոհաբերութեան խորհուրդի հետ, այնուհանդերձ ամբողջապէս եւ էականօրէն կը տարբերուի նախկին սովորութենէ: Ինչպէս արդէն նշուեցաւ, «Մատաղ» բառը արդէն իսկ կը բացատրէ արարողութեան իմաստը: Եւ Եկեղեցոյ պաշտօնեան ալ աղն է որ կ'օրհնէ, որն սպա գենումէն առաջ կը տրուի կենդանիին՝ մարբագործելու զայն:

Յստակ է հետեւաբար, որ հայկական մատաղը անկարելի եւ կոպիտ սխալ է նույնացնել հինկտակարանեան զոհաբերութեան հետ: Մովսիսական օրէնքին մէջ եւ այդ օրէնքին համաձայն զոհաբերուած կենդանիի արիւնը կը նախանշէր Քրիստոսի խաչին վրայ հեղած արիւնը, որուն

միջոցաւ միայն մարդը ազատեցաւ մեղքին գերութենէն: «Քրիստոս մէկ անգամ պատարագուեցաւ՝ շատերու մեղքերը վերցնելու համար» (Եբր. Թ 28): «Ան է քառօթիւնը մեր մեղքերուն, եւ ոչ միայն մեր, այլ նաեւ ամբողջ աշխարհի մեղքերուն» (Ա Յով. Բ 2): Ըստ այսմ հինկտակարանեան գոհերը ընդունելի էին մինչեւ Յիսուսի՝ Աստուծոյ Գառին խաչին վրայ պատարագուիլը: Քրիստոսի աշխարհ գալէն ետք բնականաբար կը դադրին Հին Օրէնքով կատարող գոհաբերութիւնները: Այստեսակ գոհաբերութիւնները ոչ միայն մերժելի են այլեւս, այլ նաեւ վնասակար, որովհետեւ այսպէս ընողը ըսել է թէ դեռեւս չէ ազատագրուած Քրիստոսի արեամբ եւ տակաւին մեղքին գերութեան մէջն է եւ կը ծառայէ մեղքին:

Հայկական Մատաղը գործնական ողորմածութիւն մըն է, որ նախատեսուած է աղքատներուն եւ կարօտեալներուն բաժնելու համար: Որպէս ողորմածութեան արդիւնք, ան մեզի կու տայ մեղքերու թողութեան եւ փրկութեան յոյս: Առաւել քան յստակ են Տիրոջ խօսքերը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ գոհ»: (Մտք. Թ 13): Յիսուս երանեալներու շարքին կը դասէ ողորմածը, որովհետեւ ան Ահեղ Գատաստանի օրը ողորմութիւն պիտի գտնէ. «Երանի ողորմածներուն, որովհետեւ անոնք ողորմութիւն պիտի գտնեն» (Մտք. Ե 7):

Հայ հաւատացեալի կողմէ մատուցուած Մատաղը խորապէս քրիստոնէական սովորութիւն մըն է ան Աստուած դրսեւորուած գոհաբանութեան ձեւ մըն է՝ կեանքի երջանիկ կամ փորձութեան պահերուն եւ կամ ի յիշատակ ննջեցեալ հարազատներու: Իսկ մատաղին նպատակը բարեգործութիւնն է՝ մերձաւորի, դիմացինի կամ ընդհանրապէս մարդու նկատմամբ դրսեւորուած հոգածութեան եւ ուշադրութեան արտայայտութիւն:

Դեռեւս վաղ քրիստոնէական շրջանէն սկսեալ այս գեղեցիկ սովորութիւնը ընդհանրացած է քրիստոնէայ հայերու մէջ եւ պահած է իր շարունակականութիւնը մինչ այսօր: Պատմութիւնը կը վկայէ, որ երբ Մբ. Գրիգոր Լուսաւորիչ Մբ. Տրդատ թագաւորը եւ ժողովուրդը կը մկրտէ, Արեւմտեան Հայաստանի Տարոն գաւառին Մբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցիին առջեւ գոհաբանական Մատաղօրհնութիւն կը կազմակերպուի: Այդ օրունէ սկսեալ մեծ տօներու, եկեղեցիի մը հիմնարկէքի կամ օծման եւ այլ առիթներով կը կազմակերպուին Մատաղի հանդիսութիւններ: Ըստ հայ պատմիչ Ստեփաննոս Օրբելեանի աղի առաջին օրհնութիւնը կատարած է Յակովբոս Տեառնեղբայր առաքեալը Ա դարուն, Վարդավառի տօնին, Անտիոքի մէջ:

ՄԱՏԱՂԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

Ինչպէս Աստուծոյ մատուցուած ամէն ընծայ, մատաղի կենդանին եւս պէտք է ընտիր ըլլայ, ինչպէս Իսահակն էր Աբրահամի աչքին սիրելի (Ծննդ. ԻԲ), որպէսզի հաճելի ըլլայ Տիրոջը, ինչպէս Աբելի պարագային էր (Ծննդ. Գ): Խեղանդամուած կամ արատ ունեցող կենդանի կարելի չէ մատաղ ընել: Ան անհրաժեշտ է, որ ըլլայ արդար վաստակէն եւ սրտաբուխ, քանի որ անելորդէն տրուածը նուիրաբերութեան արժէք չունի: Ընդունուած կարգին համաձայն մատաղ կարելի է ընել միայն արու կենդանիներու՝ արջառ, ոչխար, աքաղաղ կամ աղաւնի: Արջառի պարագային պէտք է եփուած միսը բաժնել 40 ընտանիքի, ոչխարի պարագային՝ 7 ընտանիքի, աքլորի պարագային՝ 3 ընտանիքի: Իսկ աղաւնիի պարագային նախընտրելի է ոչ թէ մորթել, այլ բաց թողնել:

«Մայր Մաշտոցին» մէջ պահպանուած աղի օրհնութեան ժամանակ Գուկասու Աւետարանէն ընթերցուող հատուածէն (տես Գուկ. ԺԳ 12-14) պարզ կը դառնայ, որ Մատաղը առաջին հերթին բարեգործութիւն է, ողորմութեան եւ գթասրտութեան արգասիք եւ ոչ թէ խնջոյքի կամ զինարբուքի առիթ:


Հայ Եկեղեցոյ մատաղի արարողակարգին համաձայն քահանան՝ սաղմոսներ եւ աղօթքներ կարդալով կ'օրհնէ աղը, որն այնուհետ կը տրուի կենդանիին ուտելու, որպէսզի ան սրբուի աստուածային անէծքէն (հմմտ. Ծննդ. Գ) եւ վերստին ստանայ առաջին օրհնութիւնը (տես՝ Ծննդ. Ա 22): Աղի օրհնութեան աղօթքին մէջ կը կարդանք. «Օրհնէ, ով Տէր, քո ողորմութեամբ այս աղը եւ սրբէ աս, որպէսզի ամէն բան մէջ, որ ասիկա խառնուի, հաճելի եւ ընդունելի ըլլայ քեզի, եւ մեզ մարբէ՝ հոգիի եւ մարմնի առողջութիւն տալով...» (Մաշտոց Ծիսարան):

Աղը մաքրութեան եւ անապականութեան օրինակ է, ինչպէս Քրիստոս կ'ըսէ իր աշակերտներուն. «Դո՛ւք էք երկրի աղը» (Մտք. Ե 13), «Ձեր մէջ աղը ունեցէք» (Մրկ. Թ 49): Եւ

առաքելներն ալ Աստուծոյ խօսքին, այսինքն՝ Սուրբ Աւետարանին քարոզութեամբ մաքրեցին երկրի ապականութիւնը:

Այսօր ոմանք անգիտաբար մատաղացու կենդանիին արիւնէն կը քսեն իրենց ճակատներուն, որ միշտ ալ մերժուած է եւ այսօր ալ բնականաբար կը մերժուի Հայ Եկեղեցիի կողմէ: Իբրեւ Քրիստոսի արիւնով փրկուած քրիստոնեաներ, մեր բոլոր զգայարանները օծուած են Քրիստոսի արիւնով եւ իբրեւ Հայ Եկեղեցոյ մէջ մկրտուած ու կնքուած քրիստոնեայ հայեր, մեր ճակատին ստացած ենք Սուրբ Միռոնի կնիքը: Հետեւաբար մեր ճակատներուն ոչ մէկ այլ կնիքի կամ նշանի կարիք չունենք: Բացարձակապէս մերժելի եւ դատապարտելի է նաեւ մատաղացու կենդանիի արիւնէն եփել եւ խմել տալ որեւէ անձի:

Թէ՛ անցեալին եւ թէ՛ այսօր մեր Եկեղեցիին մէջ Սբ. Պատարագներէն ետք հաւաքական ճաշի կը հրաւիրուին բոլորն անխտիր: Ներկայիս մեր համայնքներու մէջ տարածուած Սիրոյ Սեղանները ուրիշ բան չեն, եթէ ոչ մատաղօրհնութեան մէկ ձեւը: Սփիւռքեան մեր պայմաններու մէջ Մատաղին սովորութիւնը պահելով հանդերձ իր բուն էութիւնը, որոշ չափով փոխած է իր մատուցման ձեւն ու կերպը: Այսօր մեր համայնքները կը կազմակերպեն Մատաղօրհնութիւններ, որոնց ընթացքին նիւթապէս հնարատրութիւն ունեցողները ոչխար մը մորթել տալով եկեղեցիին կամ համայնքին կը նուիրեն: Եկեղեցին կամ Համայնքն ալ միսը հոգետրականի կողմէ օրհնուած աղով եփել տալով կը բաժնէ եկեղեցական արարողութեան ներկայ բոլոր հաւատացեալներուն: Այս բաժանման ընթացքին աղքատ կամ հարուստի միջեւ խտրութիւն չի դրուիր: Փափաքողներ կրնան հացին մէջ դրուած օրհնուած միսը նաեւ իրենց տուններին տանիլ՝ տալու համար անոնց, որոնք այս կամ այն պատճառով չեն կրցած ներկայ ըլլալ արարողութեան: Եկեղեցական արարողութենէ ետք հաւատացեալները կը հրաւիրուին համայնքին կամ ուրիշ սրահ մը, ուր կը կատարուի նաեւ նուիրատութիւն կամ հանգանակութիւն: Յանկացողներ իրենց նիւթական նպաստն ու մասնակցութիւնը կը բերեն օժանդակելով Համայնքին եւ անոր մարդասիրական ծրագիրներուն:





MADAGHORHNUTYUN

Das armenische Wort *Madaghorhnutyun* ist eine Zusammensetzung von drei armenischen Wörtern: *Madutzwads aghin orhnutyun*. In Deutsch heißt es: *Segnung des dargebrachten Salzes*. Madaghorhnutyun ist eine der schönsten spirituellen Traditionen der Armenischen Kirche. Die Wurzeln dieser Tradition, zutreffender ist in diesem Fall die Tradition der Opfergabe, liegen im vorchristlichen Zeitalter, denn die Opfergabe bildete in der Vergangenheit ein Teil der Tradition vieler Völker.



Auch im Alten Testament sind zahlreiche Beispiele der Opfergabe zu finden. Es genügt, nur die Opferdarbringung des Kain und Abel oder die Geschichte mit Abraham und Isaak aus der Bibel als Beispiel zu erwähnen. **Vergessen wir nicht, dass unser Herr Jesus Christus sich selbst als Lamm Gottes freiwillig für die Rettung der sündigen Menschheit opferte. Die Hl. Messe der christlichen Kirche ist nichts anderes als die Versinnbildlichung der Selbstopferung Christi.**

Das Wesen der christlichen Religion ist die Liebe an Gott und den Nächsten. Unser Herr Jesus Christus gibt uns folgendes Gebot: „*Seid barmherzig, wie es auch euer himmlischer Vater ist*“. (Luk. 6, 36)

Die Pflege und Betreuung der armen und bedürftigen Menschen wurde erstes Mal in der christlichen Kirche Teil des Gemeindelebens, und die Kirche hat in ihrem Dienst und ihrer Tätigkeit diese praktische Liebe vom Anfang an bis heute als einer ihrer Hauptaufgaben betrachtet und stets versucht, das Herrengebot zu verwirklichen und, als ein schönes Beispiel, den neuen Generationen weiter zu geben: „*Wenn du mittags oder abends ein Essen gibst, so lade nicht deine Freunde oder deine Brüder, deine Verwandten oder reiche Nachbarn ein; sonst laden auch sie dich ein, und damit ist dir wieder alles vergolten. Nein, wenn du ein Essen gibst, dann lade Arme, Krüppel, Lahme und Blinde ein. Du wirst selig sein, denn sie können es dir nicht vergelten; es wird dir vergolten werden bei der Auferstehung der Gerechten*“. (Luk. 14, 12-14)

Die Armen und Bedürftigen, die Weisen und die Witwen genossen die Fürsorge der Gemeinde und sollen es auch heute genießen. Der Hl. Sahak Bartevo Katholikos (5. Jahrhundert) bezeugt, dass der Hl. Gregor der Erleuchter nach der Christianisierung Armeniens angeordnet hat, statt den Göttern Opfer darzubringen, das Fleisch der geopfert Tiere an Arme auszuteilen.

Bis heute versuchen viele der Armenischen Kirche Vorwürfe wegen des Madagh zu machen, es sei ein Rest von Heidentum, Judentum, Barbarei. Aber trotz ihrer Beziehung zu der vorchristlichen Opfergabe unterscheidet sich das Madagh der Armenischen Kirche grundsätzlich und wesentlich von ihrer vorangegangenen heidnischen Tradition. Wie schon erwähnt wurde, erklärt selbst das armenische Wort "Madagh" den Sinn der Zeremonie. So segnet der Geistliche das Salz, welches dem zum Madagh bestimmten Tier überreicht wird, damit es rituell gereinigt wird.

Folglich ist es eindeutig, dass es nicht möglich und dazu noch ein großer Fehler ist, das armenische Madagh mit der alttestamentlichen Opfergabe gleichzusetzen. Das Blut des im Gesetz vom Mose und entsprechend dieses Gesetzes dargebrachten Tieres vorsymbolisierte das am Kreuz vergossene Blut Christi, wodurch nur der Mensch von der Knechtschaft der Sünde befreit wurde. „So wurde auch Christus ein einziges Mal geopfert, um die Sünden vieler hinwegzunehmen“. (Heb. 9, 28) „Er ist die Sühne für unsere Sünden, aber nicht nur für unsere Sünden, sondern auch für die der ganzen Welt“. (1. Joh. 2, 2). Folglich waren die alttestamentlichen Opfer nur vor der Opferung Christi,

dem Lamm Gottes, am Kreuz akzeptabel. Selbstverständlich sollten alle durch das Gesetz Mose vollzogenen Opfertaten nach der Ankunft Christi aufhören. Solche Opfertaten sind nicht nur abzulehnen, sondern auch schädlich, denn wer solche Opfer darbringt, ist nicht durch das Blut Christi errettet worden und bleibt noch in Knechtschaft der Sünde und dient der Sünde.

Das armenische Madagh ist eine praktische Barmherzigkeit, welche für die Austeilung an die Armen und Bedürftigen vorgesehen ist. Als Ergebnis dieser Barmherzigkeit gibt es uns Hoffnung auf die Sündenbefreiung und Errettung. Mehr als eindeutig sind die Worte des Herrn: „*Barmherzigkeit will ich, nicht Opfer*“. (Matth. 9, 13) Jesus zählt den Barmherzigen zu den Reihen der Seligen: „*Selig die Barmherzigen; denn sie werden Erbarmen finden*“. (Matth. 5, 7)

Das armenische Madagh ist ein menschlich tiefgründiger und christlicher Brauch des Dankes an Gott für die erwiesenen Gnaden, Bitte um Seelenfrieden für die Verstorbenen, Bitte um Vergebung der Sünden sowie die Darstellung einer Form der Dankbarkeit in glücklichen oder schwierigen Zeiten im Leben. Das Ziel des Madaghs ist die Wohltätigkeit gegenüber den Armen, dem Nächsten oder im allgemeinen, ein Ausdruck der Fürsorge und Aufmerksamkeit gegenüber Menschen.

Schon in frühchristlichen Zeiten führten die armenischen Christen diesen Brauch weiter. Als der Hl. Gregor der Erleuchter den König Drtad und das ganze Volk für das Christentum gewonnen hatte, wurde bei der Kirche des Hl. Johannes des Täufers in der Stadt Taron in West Armenien ein Dankopfer dargebracht. Seitdem gibt es Madaghorhnutyun an großen Festtagen, an Kirchweihfesten. Laut dem armenischen Geschichtsschreiber Stepannos Orbelian hat die erste Salzsegnung der Herrenbruder, Apostel Jakobus, im 1. Jahrhundert, während des Verklärungsfestes in Antiochien, vollzogen.

DIE FORM DER MADAGHSEGNUNG

Wie jedes dem Gott dargebrachte Opfer, soll auch das zum Madagh versprochene Tier ausgewählt und gut sein, wie Isaak vom Abraham geliebt war (Gen. 22), damit es dem Herrn angenehm wird, wie die Opferdarbringung vom Abel (Gen. 4). Ein Tier, das krüppelig ist und Makel aufweist darf nicht als Madagh dargebracht werden.

Es ist notwendig, dass das Madagh vom gerechten Verdienst und aus der Tiefe des Herzens dargebracht wird, da nur solche Darbringung für Gott angenehm ist. Gewöhnlich sollen nur männliche Tiere als Madagh dargebracht werden und zwar Rind, Schaf, Hahn oder Taube. Wenn es ein Rind ist, soll das gekochte Fleisch an 40 Familien ausgeteilt werden, wenn es ein Schaf ist – an 7 Familien, wenn es ein Hahn ist – an 3 Familien. Eine Taube soll frei gelassen und nicht geopfert werden.

Der Abschnitt aus dem Lukas Evangelium (Luk. 14, 12-14), welcher während im Hauptkausalbuch „*Mayr Maschtotz*“ beinhaltenden Ritus der Segnung des dargebrachten Salzes verlesen wird, zeigt uns deutlich, dass das Madagh in erster Linie eine Frucht bzw. ein Ergebnis der Wohltätigkeit und der praktischen Barmherzigkeit ist und kein Anlass für eine Gelage sein soll.

Gemäß der Zeremonie vom Madagh segnet der Geistliche durch Lesung von Psalmen und Gebeten das Salz, welches danach dem für Madagh bestimmten Tier gegeben wird, damit es vom Gottesfluch gereinigt wird (siehe Gen. 3) und wieder den ersten Segen erhält (siehe Gen. 1, 22). Im Gebet der Segnung des Salzes lesen wir: „*Segne, oh Herr, durch deine Barmherzigkeit dieses Salz und reinige es, damit alle Speisen, in denen es gemischt wird, für dich angenehm und annehmbar werden und uns reinigen und seelische und leibliche Gesundheit geben*“. (Kausalbuch „Maschtotz“)

Das Salz ist Symbol für Reinheit und Makellosigkeit, wie Christus seinen Jüngern sagt: „*Ihr seid das Salz der Erde*“ (Mat. 5, 13), „*Habt Salz in Euch*“. (Mark. 9, 50) Und die Apostel haben durch die Verbreitung des Wortes Gottes, also des Heiligen Evangeliums, die Erde gesalzt.

Aus Unkenntnis machen einige mit dem Blut des zum Madagh bestimmten Tieres Kreuze auf ihre Stirnen, was sowohl in Vergangenheit als auch selbstverständlich heute von der Armenischen Kirche abgelehnt wurde und wird. Wir sind durch das Blut Christi errettete Christen und als im Becken der

Armenischen Kirche getauft und gesalbten christlichen Armenier bekamen wir das Siegel mit dem Hl. Myronöl. Also brauchen wir kein anderes Siegel bzw. Zeichen auf unseren Stirnen. Es ist auch strengst verboten und verwerflich, vom Blut des zum Madagh bestimmten Tieres zu kochen und zu trinken.

Sowohl in Vergangenheit als auch heute werden nach der Hl. Eucharistiefeyer ausnahmslos alle zum gemeinsamen Essen eingeladen. Das heute in unseren Gemeinden verbreitete Agapemahl (Siro Seghan oder Siro Dschasch) ist nicht anderes, als eine Art von Madagh. Im neuen Umfeld der Diaspora haben die Armenier dem Wesen des Brauches vom Madagh treu bleibend die Form des Madaghfestes etwas umgeändert. Heute organisieren unsere Gemeinden Madaghfeste, bei denen finanziell Wohlhabenden ein Schaf bzw. das benötigte Geld für den Kauf des Schafes der Gemeinde oder der Kirche spenden. Die Kirche oder die Gemeinde lässt das Fleisch mit dem durch den Geistlichen gesegneten Salz kochen und an die am Gottesdienst anwesenden Gläubigen austeilen. Und während dieser Austeilung macht die Kirche keinen Unterschied zwischen den Wohlhabenden und nicht Wohlhabenden. Viele nehmen vom im Brot verpackten gesegneten Fleisch auch mit nach Hause, für ihre Bekannten oder Verwandten, die keine Möglichkeit hatten anwesend zu sein. Nach dem Gottesdienst werden alle Gläubigen zum Madaghfest in einen geeigneten Saal eingeladen. Nach der Speisung vom Madaghfleisch sind die Gläubigen auch eingeladen, ihre Unterstützung für die Gemeinde bzw. deren Wohltätigkeitsprojekte zu leisten.

